Փայլում ե մի վերջին կրակ,
Ահեղ ալիքների արշավը կույր,
Նրան խոր սուզում ե ջրերի տակ...

... Ալսպես կորավ այն խեղճ ձկնորսն անհետ
Բայց նրա լեզենդը մնաց անմեռ.
Աղջկը, ծովափին, լուս, ակընդետ
Ձկնորս աղային ե սպասում զեռ...
Յեկ ասում են, վոր յերք ջրերը հորդ
Ալեկոծված ափն են հանում նրան՝
Յամաքարերդի տակ, ծովափին մոտ,
Լուս զրկում են յերկու հոգի իրար...

1927

ԲԱԼԼԱՐ ԶԿՆՈՐՍ ՄԵԶԻՏԻ, ՇՈՎԻ ԱՂՋԿԱ.
ՅԵՎ ԱԼՏԱՐ ԹԱԳԱՎՈՐԻ ՍԱՍԻՆ

Ձահել մի ձկնորս կար
իր անունը Մեշխտ.
Ուներ նա մի ուռկան
Ու փայտե մի խրճիթ.

Մի անգամ այս ջահել
Ձկնորսը լուռ-լոին
Նստած սուր նայում ե
Ծփծփացող ջրին.

Նայում ե շվարած՝
Տեսնում ջրից վճիտ
Դուրս ե գալիս հանկարծ
Մի հրեղեն աղջիկ.

Աչքերը փիրուղե,
Դեմքը սիպ-սպիտակ,
Ծովի կանաչ սեղը
Գլուխն, իրքի պսակ.

Նա ասում ե.—«Ձկնորս,—
Շատ եմ սիրում յես քեդ.
Այ, իմացիր, մի որ՝
Տնենըդ պիտի գամ յես».

Ձկնորսն շտապում ե,
Վոր բռնի աղջրկան.
Աղջիկը սուզվում ե,
Թողած դատարկ ուռկան.

Տղան մնում ե յուռ,
Մինչ յեխում ե լուսին.
Ու տուն զառնում տխուր,
Դատարկ ուռկանն ուսին.

Տուն ե դառնում, անհույս,
Տեսնում, վոր տան մթից
Շող ե տալիս մի լույս
Փոքրիկ լուսամուտից,

Տեսնում տունը մաքուր,
Կարգին, վոնց վոր պալատ.
Ու պես-պես կերակուր
Ու հետն ել հայն առատ.

Զարմացած ու մոլոր
Նայում ե իր շուրջը.
—Այ, քեզ հրաշք իսկ վոր,
Այս ե ասում թե չե՞

Տան անկյունից անլույս,
Ինչպես յուսինն ամպից՝
Դուրս ե գալիս մի կույս
Արկի պես անրիծ...

Զի հավատում աչքին
Տղան վոնց յերազում,
Սիրող ու քնքշազին
Այս խոսքերն ե լսում—

— «Յես հեռացա ծովից

Քո լավ սրտի համար,

Վոր հուըը խրճիթիդ.

Պահեմ միշտ վա՛ռ, անմա՛ր:

Ծովում ամեն ինչ կար,—

Սեր ու հարստություն,

Բայց յես փնտեցի կյանք՝

Քո այս զորչ խրճիթում...»:

Նայում ե ձկնորսին,

Ու ձկնորսն ել նրան.

Մինչև ծեղը լույսի՝

Գուրգուրում են իրար:

Բայց աղքատն իր որում

Միշտ անրա՛խա ե, անկա՛ր,

Քանի վոր աշխարհում

Տեր ու թագավոր կա:

Յեզ աշխարհում այն հին,

Ինչպես մթին որը՝

Իշխում եր իր զահից

Աւար թագավորը:

Գեղեցիկ եր նա շա՛տ.

Զահել՝ ինչպես գարուն.

Բայց միտոք չա՛ր, գաժա՛ն.

Միշտ ուզում եր արյուն...»

Մահվան պահին անգամ

Մնաց արյան ծարավ.

Ափսոսաց, վոր սակայն

Աշխա՛րը չը կերավ...»

Մի որ թագավորն այս

Պատշգամբից իրա

Նայում ե փայտե պարդ,

Քորչ խրճիթի վրա:

Մեկ ել տեսնում ե ինչ,

Խրճիթից ձկնորսի՝

Մի կին ե զուրս գալիս,

Ինչպես լիալուսին

Դեմքը սիրուն, չքնաղ.

Հանակը ճկուն ծառ.

Սպիտակ ու շարմաղ,

Չյունի նման պայծառ:

— Հեյ, ծառանեղ, յեկեք,

Կանչում ե նա ահեղ,—

Առեք նիզակ ու տեղ,

Առեք նետ ու աղեղ.

Այս խրճիթում յես մի

Կին տեսա վոնց արե.

Թոքը, ինչպես քամի,

Իսկույն այստեղ բերեք...»

Չի անցնում ակընթարթ՝

Խրճիթ են շտապում.

Զարգում թե զուռ, թե սպատ

Իրար վրա թափում...»

Իսկ ձկնորսին անուժ՝

Մարդիկն այդ զինավառ՝

Քշում, զուրս են անուժ

Մի աշխարհից-աշխարհ...»

Ու տանում են սիրուն,
Կնոջը լուսերես.
Թագավորը նայում
Յել ասում ե այսպես —

—Ո՞վ ես, չքնա՞ղ եյակ,
Ասա՞ ինձ, ով ես դու.
Ի՞նչ ես շինում մենակ,
Փայտե գորշ խրճիթում:

Յեկ իմ պալատն առմիշտ,
Վայելիր փառք ու սեր,
Այս ծիրանին կարմիր,
Տալիս եմ քեզ նվեր...

Հաղցնում են իսկույն
Հաղուստներ թանկագին.
Ու նրան հոչակում
Թագավորի նոր կին.—

Թագավորն ել նույն ժամ
Իր յերկրին բովանդակ
Գրում ե ցնծության
Մի մեծ հրովարտակ: —

Հնդ ե նվեր տալիս
Իշխաններին, վուսանց.
Փնդ ե նվեր տալիս,
Շքանշան ու գանձ...

Ու գառնում է հիմի
Այսպիսի բան ասում: —
—Դնու, իմ նոր թագուհի,
Ըստրիք, ի՞նչ ես ուզում: —

—Ես չեմ ուզում վնչ գահ,
Վնչ փառք, վնչ սեր, վնչ սուր.
Իմ ձկնորսի աղքատ,
Գորշ խրճիթն եմ ուզում...

Յետ տուր ինձ, թագավնի,
Իմ սիրած ձկնորսին.
Կլինեմ բախտավոր
Աշխարհիս յերեսին

Թագավորն ամեհի՝
Խիստ ասում ե այսպես.
—Կամ մահ, կամ թագուհի,
Ընտրիք՝ վորը կուզես...

Յեկ ինչվոր ել անում՝
Կինը խոսք չի տալիս.
Որերով լուս մնում,
Թախծում ե ու լալիս.

Միտք ե անում, խոր միտք,
Ալտար թագավորք,
Վոր մի հսար գտնի՝
Տխուր չանցնի որը: —

Միշտ խնձույք ե անում.
Նիզակախաղ, հանդես.
Կինը լուռ ե մնում,
Անտարբեր՝ քարի պես.

Կատաղում ե, գոչում
Թագավորը ցանկուտ.
Ապա շտապ կանչում
Ծառաներին իր մոտ

—Հեյ, ծառաներ, յեկեք,
Այս համառ ու անխելք
Կնկանը շուտ տարեք,
Մութ դնդանը գցեք!

Ու տանում են զցում
Զնդանը ահալի.
Ոքը մի բաժակ չուր,
Մի կտոր հաց տալիա—

Չարչարում են այնքան
Անոգնական գերուն.
Բայց նա կրկին անդամ
Դառնում ե լավ, սիրուն.

Գալիս թագավորին՝
—Մեր թագավոր, ասում,
Ծեծում ենք՝ նա նորից
Զկնորսին ե ուզում.

Միտք ե անում, խոր միտք,
Թագավորը հզոր,
Վերջը վհուկից մի
Լավ խորհուրդ ե ուզում.

Ու բերում են ել յետ
Ապարանքը նրան.
Բայց չի ազդում յերբեք
Կախարդանքը իրան...

Կինը հպարտ կանգնում
Յեվ ասում ե այսպիս.
—Թագավոր մեծանուն,
Ահա, ասնում եմ յետ.

—Ինչ ուզում ես՝ արա՛,
Ուզում ես տուր սրի,
Բոնիք, զցիք կրակ,
Միտքը պիտի սիրի...

Միտք՝ անում, խոր միտք՝
Թագավորը հզոր.
Վերջը վհուկից մի
Լավ խորհուրդ ե ուզում.

Յեվ ահա չար, նախանձ,
Իր արհեստին սովոր
Կուզ վհուկը կախարդ՝
Ասում ե.—Թագավոր,—

Ես եմ գուշակում յետ,
Քո զլուխը վկա.
Թե վոր փորձանք գա քեզ՝
Ես կնկանից կգա...

Փրփրում ե այսուեղ
Թագավորը այնքան.
Ասում՝ ծնվը նետել
Սյդ աղքատի կնկան:

Ծառաները գնում,
Զնդանից հապշտապ
Խեղճ կնոջը հանում,
Քաշ են տալիս ծովափ.

Ու բարձրաբերձ ժայռից
Գցում ծովի անեղերը...
Բայց նա նորից, նորից
Միշտ յերգում ե մի յերգ—

—ՅԵԿ, իմ ձկնորս աղա,
ՅԵԿ գու սեր իմ մաքուր.
Ապրիլ իմ բյութեղյա
Լայն ծովի տնակում:

Եինված ե անակն այս
Մարմար աղից ծովի.
Սերն աղատ ու պարզ,
Հմայիչ ու թեփիչ...

ՅԵԿ, իմ ձկնորս աղքամ,
Մտիր ծովը խորունկ.
Ուր վոչ թագավհար կա,
Ուր վոչ անը ու սարնկ...

1938

ՍԻԱՄԱՆՏՈՆ ՈՒ ԽՍԶԵԶԱՐԵ

Նվիրում եմ նորս, Սահակ Մովսիսյանին,
Առաջին Ռևոլյուցիոն:

Սիամանտոն յերազի մեջ
Մատանի տվեց Խաջեղարեյին
Խաջեղարեն՝ յերազի մեջ
Մատանի տվեց Սիամանտոյին.—

Մեկ մեկի յերազող՝
Սեր տվին, սեր տասն,
Սիամանտոն սիրեց Խաջեղարեյին,
Խաջեղարեն՝ Սիամանտոյին.

Բարի լուսը բացվի ձեզ վրա,
Բարի լուսը բացվեց Սիամանտոյի վրա.
Կորիճն հեծավ հեշինբող*) ձին,
Քշեց, կորավ գումանի մեջ,
Կանգնեց մի մեծ հլի**) առաջ,
Մտավ մի պառիու կոն***).

Կոնը թնդում եր
Դհոլ—զուռնի ձենից...

— Մամիկ,—ասաց Սիամանտոն,—
Ես ինչ գհու զուռնի ձեն եւ

Պառամի ասաց,
— Վժրգիս, Խաջեղարեյի հարսանիքն ե,
Նրա հարսանան յեկել ե,
Քեփ ե, յերեք յերեկ ու յերեք գիշեր.

*) Սպիտակ—վոսկեգույն.

**) Ցհղ.

***) Վրան.

Սիամանտոն ասաց.

— Այ պառակ մամիկ, խղճա՛,
Առ ես մատանին,
Տար ես մատանին Խաջեղարելին.

Հանեց Սիամանտոն յերազափոխ մատանին
Պառակը յելակ վոտքի,
Առակ նախշուն թաշկինակ,
Մեջը լցըց անկուտ չամիչ.
Մատանին խառնեց անկուտ չամչին,
Գնաց Խաջեղարելի մոտ.

Խաջեղարեն նվերն առավ,
Մատներով խառնեց անկուտ չամիչը,
Հետը խաղաց.
Մեկ ել աչքն առակ յերազափոխ մատանին,
Են ճանաչեց մատանին.
Սրոտվը մեկ մի քաշեց,
Աչքերը մթնեցին,
Թուլցա՛վ, ուշը գնաց.

Պառակը մեկ ձեռքը զըկց Խաջեղարելի աչքերին,
Մեկել ձեռքով առակ գետին ընկած զլուխը.
Մորմորելով ցասաց.
— Թող բռնա՞ն աչքերս, Խաջեղարե,
Վեր կաց, ուշը յեկ,
Ի՞նչ յեղակ, ի՞նչ տեսար,
Ի՞նչը զարկեց քեզ, Խաջեղարե.

Պառակի ձեռը պաղ եր.
Զենը՝ մոր ձենից անուշ,
Պաղ ձեռից ու անուշ ձենից՝
Զարթնեց Խաջեղարեն.

Ասաց.

— Մամիկ, Խաջեղարեն քեզ մատադ,
Ասա՛, զիտեն ես մատանու տերն ուր եւ
— Եղ մատանու տերն՝ իմ տանն եւ.

Խաջեղարեն կարմրեց,
Վոնց վոր քաֆուր վարդը,
Խաջեղարեն թեթիցավ,
Վոնց վոր Սիփանա հովը

— Մա՛միկ, մա՛միկ,—ասաց Խաջեղարեն,
Իմ հարսնան յեկել ե,
Յերեք ցերեկ ու յերեք գիշերն անցավ,
Գնա՛, Սիամանտովին ասա՛
Մեկ որ կա ու մեկ հնարք
Վազր, առավոտ, մորս գերեզմանին ուխտ կերթամ,
Մենա՛կ կերթամ,
Թող գա ենտեղ, ենտեղ ինձ տեսնին
Գնա՛.

Պառակը յեկակ տուն, ասաց.

— Վազր, առավոտուն, Խաջեղարեն ուխտ կերթա.
Իր մոր գերեզմանին ուխտ կերթա,
Մենակ կերթա.
Ասաց, — Թող գա ենտեղ իրար տեսնենք.

Սիամանտոն գիշերն աչք չփակեց.
Գիշերանց գնաց Խաջեղարելի մոր գերեզմանին,
Շատ նայեց Խաջեղարելի ճամրին,
Աչքերը քնով ծանրացան,
Արան^{*)} քաշեց զլիսին, քնեց:

Շատ քնեց, քիչ քնեց,
Ինքն ու իր քոնը զիտեն.

*) Մազոտ կիսակերարկու.

Առավոտ լուսուն՝
 Յեկալ Խաջեղարեն մոր գերեղմանին,
 Տեսալ Սիամանտոն քնել եր,
 Շատ կանչնեց, շատ նայեց,
 Զեռք չըսնեց՝ ձեն տա Սիամանտոյին,
 Սիամանտոն քնել եր, խորը քնել եր
 Շատ մնաց, շատ նայեց Խաջեղարեն,
 Յերես գարձրեց քնածից, խռովեց.
 Մի դույզ վոսկե վեգ հանեց ծոցից—
 Դրեց Սիամանտոյի ջերն ու գնաց,
 Արել կեսոր նշնեց,
 Վոր արել կեսոր նշնեց,
 Սիամանտոն քնից յելալ.
 Շուրջ բոլորը մարդ չկար,
 Գլուխ ծեծեց, մալուլ*) դարձալ պառավի կոնը,
 Մալնւլ եր Սիամանտոն,
 Վոնց վոր Սիփանա սև ամպը,
 Մալնւլ եր Սիամանտոն,
 Վոնց վոր աշունքվա սև որը,
 Պառավի հարցրեց.
 — Տեսար, վորդիս
 — Մա՛միկ, —ասաց Սիամանտոն,
 Գիշերանց գնացի,
 Քունն ինձ հաղթեց, քնա.
 Աչք բաց արի՝ շուրջ բոլոր մարդ չկար,
 Մալնւլ եր Սիամանտոն,
 Վոնց վոր Սիփանա սև ամպ.
 Մալնւլ եր Սիամանտոն,
 Վոնց վոր աշունքվա սև որը,

*) Մալուլ—տիուր, թախժոտ.

Պառավից միտք արալ, միտք, ասաց.
 — Վնրդիս, շատ միամիտն ես,
 Մամիկ տուրք քո ծոցն ու ջերը,
 Սիամանտոն մտիկ տվեց ծոցն ու ջերը,
 Մի զույգ վոսկե վեգ հանեց ջերից...
 — Տեսամը, վնրդիս,
 Խաջեղարեն քեզ քնից չի հանել,
 Նշա՞ն ե թողել Խաջեղարեն.
 Մամիկ տվեց Սիամանտոն վոսկե վեգերին,
 Մամիկ տվեց, զլուխն որորեց.
 Բան չիմացալ, ասաց,
 — Ես վեցն ինչի՞նշան ե, մամիկ,
 Մամիկ տվեց պառավից վոսկե վեգերին,
 Մամիկ տվեց, ասաց.—
 — Եղ նշան ե թե՛ դու յերեխա՛ յես,
 Սերը քո բանը չե՛,
 Գնա, յերեխանց հետ վեգ խաղա
 Ամաչեց Սիամանտոն,
 Գույն ագեց զույն առավ,
 Լացեց, աղաչեց,
 — Գնա՛, մամիկ.—առաց գնա՛ մի անզամ ել
 Թող վերջին խոսրն ասե Խաջեղարեն.
 Գնաց պառավիր, տեսալ Խաջեղարեյին,
 Դարձավ, ասաց
 — Թե վոր Սիամանտոն տղամարդ ե, .
 Թե վոր սիրել զիտե, թող իմանա՛
 Վազր ինձ կտանեն,
 Թող հեծնի հեղինը ձին,
 Ուսին զցի նետ աղեղ,

Դա, կանգնի ճամբու վրա,
Արծովի պես ճեղքի, մանի ձիավորների մեջ,
Կլի ինձ, զնի հեշինբողին,
Քշենք հասնենք Սեփանա զլուխ,
Կորչենք մուժ ու դումանի մեջ,
Եստեղ մնանք, սե՛ր տանք, սե՛ր առնենք:

Բարի լուսը բացվի ձեզ վրա,
Բարի լուսը բացվեց Սիամանտոյի վրա.
Կտրին հեծալ հեշինբող ձին,
Քշեց հեշինբող ձին,
Գնաց, զնաց կանգնեց ճամբու վրա:

Յեկավ հարսնառը, հետը հիսուն ձիավոր
Սիամանտոն քշեց հեշինբող ձին,
Կեծակի պես ցրեց հիսուն ձիավոր,
Մի ձեռը ցցեց Խաջեղորեյի վափուկ մեջը,
Բանեց ցրեց հեշինբողին,
Քշեց, քշեց:

Հիսուն ձիավոր ընկան յետե,
Հիսուն նետ աղեղով զարկեցին.
Սիամանտոն իր նետ աղեղով
Հիսուն ձիավոր ցրեց:
Հիսուն ձիավոր ընկան յետե,
Հիսուն նետ աղեղով զարկեցին.
Սիամանտոն հեշինբող ձիով
Հիսուն ձիավոր ցրեց:

Յետ գարձախ,
Գրկեց Խաջեղարեյին, ասաց.
— Խաջեղարե, Եստեղ հիսուն ձիավոր չկա,
Եստեղ մի կարիճ կա, ով եւ

— Եղ ե՞ն ե, իմ Սիամանտոն,
Ումից զու խլեցիր ինձ...

Իջավ Սիամանտոն հեշինբող ձիուց,
Արան ձալեց չորս տակ,
Նստեցրեց Խաջեղարեյին,
Ել յետ հեծալ հեշինբող ձին,
Դարձավ կստորեց հիսուն ձիավոր,
Դարձավ կստորեց հիսուն ձի.
Դեմ գիմեց Սիփանա մուժը,
Եստեղ, Սիփանա զլիխին՝
Խաջեղարեյի ճնկան խորը քնեց Սիամանտոն.

Անուշ քնի մեջ եր Սիամանտոն,
Մեկ ել Խաջեղարեն գողաց, կծկվեց.
Քնից վեր թռալ Սիամանտոն.
— Ի՞նչ տեսար, իմ աչքի լույս Խաջեղարե,
Ի՞նչ պատահեց, ի՞նչի կդողաս:

— Հրաշը բան տեսա, իմ կտրիճ,
Քառսուն վայրի յեղներ յեկան ջուր խմելու,
Նրանց հետ մի կով կար,
Կովի բացին յեղները,
Քառսուն յեղներից կովը խլեց հեշինբող յեղը,
Քե՛զ հիշեցի, ի՞նձ հիշեցի,
Հիշեցի քո սպանած հիսուն կտրիճները,
Սիրսո դող ընկավ.

Սիամանտոն մարդուց խլե Խաջեղարեն,
Ցեղից վախենա Սիամանտոն.

Յելավ կտրիճը, առալ նետ աղեղ,
Հասալ հեշինբող յեղան,
Զարկեց նետ աղեղով,

Քարից գլուխեց հեղինորոդ յեղան.
Դանակն առավ, վազեց՝ վլուխը կարի,
Յեղը մռաց, հասավ Սիամանտոյին,
Պողով հարեց, գլորեց ժեռից ցած Սիամանտոյին,
Գցեց կաղնու ցցի վրեն,
Ցիցը խրվեց կռնակը. չորս թիզ կրծքից դուրս յեկավ.

Գնաց Խաջեղարեն Սիամանտոյի յետից,
Գնաց, կեցավ ժեռ քարի գլուխը.
Տեսավ հեշինրոզ սպանփած յեղան
Ենտեղից կար Սիամանտոյի անքոցը,
Ենտեղից տեսավ նետ աղեղը.
Վազեց առավ նետ աղեղը,
Վողբաց, խաղով լացեց.

— Սիամանտն, ինչի՞ ընկար վայրի յեղան յետե,
Ա՛խ, մի տքա, Սիամանտն, մի' տքա

— Մի' լա, իմ Խաջեղարե', մի' լա,
Քո լացը ինձ ավելի ցավ ե, մի' լա:

— Սիփանա սարի գլուխը փոթորիկ ե,
Սիամանտն. քո նետ աղեղը արծաթից ե.
Չե՞ քեզ ասի, Սիամանտ' մի' գնա.
Քո նետ աղեղը ցած զիր, մի' գնա,
Վայրի յեղան յետեից մի' գնա,
Թող յերթա սեր անի, ապրի, մի' գնա.

Սիփանա սարի գլուխը գուման ու մուժ ե,
Սիամանտո', քո նետ աղեղի ձենը թեժ ե,
Եսքան ժամանակ, յարուր, ով ե լսել՝
Վորսը վորսորդին սպանեւ,
Քեզ ասի՝ Սիամանտն, մի' գնա,
Թող վայրի յեղը, մի' գնա,
Թե՞ քեզ վորս եր պետք, յես վորս չէյի, Սիամանտն.

Սիփանա սարի գլուխը ժեռ ու մացառ ե,
Քամին կիչե սարից, մահու պես սառն ե:
Սիամանտո', ճամբա տուր, գամ,
Ճամբա տուր գամ, քեզ հետ հողիս տամ—
Ա՛խ, բահ ու թիակ բերեք, ապառաժ քարեր շրջեք,
Խաջեղարեյին ու Սիամանտոյին քարերի տակ թաղեք.

Ես խաղն ասաց Խաջեղարեն,
Գցեց իրեն բարձր ժայռից, նվազ ասավ,
— Ի՞մ Սիամանտն...
Սիամանտոյի ձենը արձագանք տվավ,
— Ի՞մ Խաջեղարե...

...Ու լոեցին...
Մեռան Սիամանտոն ու Խաջեղարեն.

1928-1938

Վարուժերի ՀԵ

Հ Ա Յ Ն Ե Ց Կ Ց

Այանքն ու աշխարհը մաշվել են... վեր կենած,
Գերմանացի պրոֆեսորի մոտ գնամ.
Միմիայն նա՛ կարող ե մի ճար անել—
Կը ճնարի անուններ ու սիստեմներ,
Վորը հիմա աշխատանքովն անդադրում
Տիեզերքի ծակ տեղերն ե կարկատում...

1931

Լ Ո Ր Ե Լ Ա Յ

Հայնե

Չեմ հասկանում— յես անվերջ
Համակվում եմ ախրությամբ.
Ամբողջ որը մտքիս մեջ
Շրջում ե մի հին հեքիաթ:

Ոդը թարմ ե, կիսամութ.
Հսկնոսն ե հոսում մեղմ.
Պապրզում ե սարը լուրթ
Վերջալույսում վասկեղեն:

Քարաժայոի վրա մեծ
Նստած ե մի չքնաղ կույս.
Վոսկեվորված՝ սանրում ե
Իր մազերը վոսկեհյուսա

Վոսկի սանրով և՝ սանրում,
Յեվ յերգում ե մեղմագին,
Այնքան բաղցը ե թրթըում
Նրա քնքույշ մեղեգին:

Մինչ լուղորդը, նավակում,
Դյութված դյութիչ յերգիցն այդ,
Քարաժայոր չի տեսնում,
Նայում ե վերը անթարթ:

Զգում եմ, վոր լուղորդին
Ուզեմուզ նավակով՝
Կտա շուտով կորըստի
Լորելայը իր յերգով:

1981

Լ Ա Յ Ն Ե Ց Ի Ց

Միթե չդպացիր կյանքում—
Թռ սիրող սրտով սիրավառ,
Թե նրա աչքերի խորքում
Կար սեր մի պահած քեզ համար:

Կամ միթե նրա հոգուն մերձ
Չեղար դու վոչ մի ժամանակ.
Չե վոր սիրային դործի մեջ
Մա՛րդ եյր և վնչ... ավանակ...

1982

ՓԱԽՍԱԿԱՆԸ

ԼԵՐՄԱՆԻՆ

ԼԵԳԵՆԴ

Գյորե

Ապրում եր սուրբ մարդն անապատի մեջ,
Այժի վոտքերով ֆամիլը մի անդամ
Նրա մոտ գնաց և այսպես գիմեց.—
«Աղոթիր, սուրբ մարդ, զոր աստվածն արդար՝
Դրախտը դեմքս բաց անի, զթա,
Յամսերն ել ապաստաբան տա»,
Այնժամ սուրբ մարդը այդ գարմանսլի՝
Զարմացած գոչեց.—«Ֆա՛վս իմ սիրելի,
Քեզ համար յես վնաց պիտի աղոթեմ,
Այժի վոտքերով հարմար է միթե
Բազմես զրախտում, հրեշտակների մեջ...»,
Ֆավսը զորոտաց.—«Բայց վնաց ել լինում,
Վոր իշազըլուխ պարոններն անվերջ—
Շարքերով դեպի զրախտ են զնում...».

1932

Փախչում եր Հարունն յեղնիկից արագ,—
Արձրվից փախչող նապաստակը քան.
Փախչում եր, ահը սրտում ծվարած,
Այն գաշտից, ուր քաջ չերքեղներն ընկածու—
Հայրն ու հարազատ յեղայրներն յերկու,
Հանուն նամուսի և ազատության՝
Անարգ թշնամու սրերիցն անգութ,
Գլուխներն իրենց փոշու մեջ զտան—
Նըսնց վեհծը արյանն եր ուզում,
Բայց նա մոռացած ե' պարագ, ե' ամոթ,
Կովի մեջ թողած հրացան ու սուր՝
Փախչում եր. իրա ծանոթների մոտ:

Յեվ որը մինեց, խավար գաշտերին
Ճերմակ ծածկոցով ծածկեցին հանդարտ
Բարակ մշուշն ու ամպերը բաբդ-բաբդ.
Փչեց զեփյուրը ցուրտ արևելքից
Յեվ մարդարելի անապատին այդ՝
Կանգնեց լռակյաց լուսինը վոսկիւ

Անգութ ծուրալից ուժասպառ յեղած,
Դեմքից սըրելով քրտինք ու արյուն,
Ժայռերի միջի առւլը քնած՝
Նա տեսավ լուսնի պայծառ լույսերում.
Մոտեցավ հանգարտ ու գաղտազողի,
Շուրջը հանգիստ եր ու խոր լուսթյուն.
Նա՛ յեր, զոր միայն կովից կատաղի՝
Մազապուրծ յեղած, յետ եր գալիս տուն

Յեկ շտապում եր մի ծանոթ տան կողմ,
 Տանն եր տան տերը ու լույս եր վառվում—
 Ու գոտեպանդված, լուր՝ անցավ շեմբով,
 Վորքան վոր նրա ուժերն են ներում,
 Նա մոտ ընկեր եր Սելիմին առաջ,
 Սելիմ յեկողին լավ չճանաչեց.
 Վիրավոր ընկած անկողնի վրա
 Մեռնում եր մենակ... ու հաղիլ հնչեց.—
 ... «Մէծ ե ալլահը! Նա իր լուսավոր
 Հրեշտակներին ասաց, վոր փրկեն
 Կյանքը վերահամ մահից թունավոր.
 Յեկ հանուն փառքի...»

Ի՞նչ նորություն կա?—

Հարցրուց Սելիմն ու իր թախծալի
 Կոպերը բացեց ու աչքերն առկայծ...
 Յեկ փայլիքլեց մի լույսի հուր-կրակ
 Նրա հայացքում... Ու ահա կրկին
 Այսուը խաղաց յերակ առ յերակ
 Վախճանին հասած մեռնող մարտիկի...

— «Սելիմ, յերկու որ կովեցինք կիրճում,
 Յեղայրներս ընկան, հայրս ել նրանց հետ—
 Ինչպես զորսկանից գաղանն ե փախչում՝
 Յես թագնըվեցի անապատի մեջ.
 Յեկ փախս ահա սուր-սուր քարերի,
 Փշերի միջով, արնոտ վոտքերով,
 Խենթ վարագների, սոված գայլերի
 Ու ինձ անծանօթ, անհայտ հետքերով.
 Ընկնաւմ են մերսնք... Թշնամին չորս կողմ...
 Ընդունիր զու ինձ, ով իմ հին ընկեր.
 Մարգարեն վկա՝ լավությունը քո
 Յես չեմ մոռանա, մինչ հոգն ինձ ծածկե...»
 Ու մինչ Սելիմը հիվանդ, մահամերձ,
 Ասաց, — «Դներս կորիր, անարժա՞ն, անա՞րզ—
 Վհչ ապաստարան, վհչ որհնող լսուքեր—
 Սելիմը չունի վախկոտի համար...»

Հարունը լցված թագուն ամոթով,
 Տանջվելով այրող այդ նախատինքից,
 Հանգիստ լուսթյամբ, Սելիմի մոտով
 Անցավ և ասկ գուրս սողաց շեմբից,
 Եյդ ծանոթ տնից պոկիվելով անդարձ,
 Նա կանգ առավ լուս, մտախոհ, տրտում,
 Անցյալ որերի յերագներն, հանկարծ,
 Զերմ համբույրներով զարթնեցին սրտում,
 Վառեցին նրա ճակատը սառած,
 Թվացին այնքան քաղցր, լուսակերտ,
 Ու ահա, մուժից լուս, թևատարած,
 Ժպտում են նրան յերկու հուր աչքերը,
 Յեկ նա մտածեց.—Ո՛, սիրում եմ յես,
 Նա ինձանով ե ապրում ու շնչում
 Յեկ ուղեց մտնել... բայց լուսթյան մեջ
 Ահա հինավորց մի յերգ ե հնչում,
 Հարունը զույնն ե զցում լուսնի պես...»

«Լուսինն ե լողում
 Հանգիստ ու խաղաղ,
 Բազմի յե գնում
 Քաջասիրտ տղան.
 Հրացանն ե լցնում
 Իգիթը անահ,
 Աղջիկն ասում է՝
 Սիրելիս, գնա՛
 Յեկ արելըին
 Յեկ մարգարեյին—
 Աղոթիր կրկին
 Դու հավատարիմ
 Ով վոր վհասվի
 Թշնամուց, մենակ,
 Նա կնախատվի,
 Կմեռնի անարգւ
 Լուսինն ե լողում
 Հանգիստ ու խաղաղ,
 Բազմի յե գնում
 Քաջասիրտ տղան».

Հարունը, սակայն, մենակ, տիրադեմ
 Գնում ե ահա ուզին իր կրկին.
 Յեվ արտասուրի յերկու մեծ շիթեր
 Թերթերունքներից բոկնում են կըծքին.
 Ահա հայրական խրձիթը ծանոթ,
 Վորը վոթորկից ծովել ե, կըքել,
 Լցված նոր հույսով, կանգնեց նրա մոտ.
 Յեվ պատուհանն ե սկսում թակել,
 Այնտեղ պառաված մայրն ե իր բարի,
 Վորը աղոթք ե անում ջերմեռանդ.—
 Սպասում դարձին իր գալակների,
 Յեվ վոչ թէ մենակ Հարունին, նրան

—«Մայրիկ, զուոր բաց... խեղճ պանդնւստ եմ, յես,
 Քո Հարնւն եմ յես, քո կրտսեր վորդին.
 Ռուսի գնդակներն այրում եյին մեղ,
 Յես յեկա քեզ մոտ...»

—«Յեվ մենակ»,

—«Մենակ»,

—«Իսկ մւը են հարոգ, քո յեղբայըները...»
 —«Ընկա՞ն»—Մարդարեն նըանց մահն որհնեց,
 իսկ հողիները՝ հրեշտակները
 Տարան գեղ յերկինք...»
 —Վրիժառու չեղար.—«Նրիժառու չեղար»
 Բայց յես՝ նետի սկս թռա լեռները.
 Յեկա, վոր չզգաս քեզ վշտոս, մենակ,
 Մրեմ աչքերից քո արցունքները».

—Լոիր, մ. լոիր, խորամանկ գյավուր.
 Դու փառքով մեռնել չկարողացար.
 Թող խինդ չզգա ել քո մայրը ծերուկ.
 Հեռացիր, գնա ուզում ես ուր վորս
 Դա՞րձ փախստական, զու ստորացած,
 Դու իմ վորդին չես, այլ վախկնտ, ստրնեկ...

Ու լոեց մայրը, Ու թշվառ վորդու
 Շուրջը ծավարիեց լությունի քար.
 Պաղատեց վարդին, հասաչեց արտում
 Պատուհանի տակ յերկար ու յերկար.
 Ու անհույս, իրա խանչալը մեկից
 Խրեց սրախ մեջ... Ու այսպես սրբեց
 Հետքերն ամոթի ու նախատինքին
 Յեվ առավոտյան մայրը նկատեց՝
 Սանասիրու նայեց վորդու զիակին,
 Վորն արդարներից համարված անսուբը,
 Հողում չգտավ հանդիսաւ ու շիրիմ.
 Յեվ շունը նրա խորունկ վերերի
 Լերդացած, կարմիր արյունն եր լիզում.
 Յեվ մասուկները ծաղրանորով իրանց
 Անարգում եյին զիակը ստոած.
 Յեվ ստորմահն ու անկումը նրան՝
 Ազատության վառ յերգերում մնացի
 Յեվ մարդարեյից՝ Հարունի հոգին
 Սարսափով լցված փախչում ե հեռու.
 Ու մինչեւ այսոր շրջում ե կրկին—
 Կովկասի անհաս, բարձրը սարերում.
 Յեվ լուսամուտն ե, վաղորդյան պահին,—
 Թակում կամցուկ, վոր տունը մտնի,
 Բայց հենց լսում ե ձայնը դուրանի՝
 Թռում ե գեղի նա մուժը նորից,
 Ինչպես վոր փախավ մահից ու սրից.

1933

Կավերվեն շնչքեթ, մոխր կլինեն,
Արեւն ու անձրեւլ գույնը կտանեն.
Սակայն, իմ յնքի շնչքը բարձրաբերձ
Զի՞ կորչի անզամ մի նշանախեց.
Կանցնեն դարերը իրաք յետեվից,
Կզնահատեն ժողովուրդներն ինձ:

Փ ի օ դ ո ւ ս ի

Պ Ա Ե Տ Տ Ի Ր Դ Ո Ւ Ս Ի

Հայեն

I

Յեթէ մի խղճալի աղքատ
Մաքումն իր հաշիվ ըսկափ,
Իհա՛րկե, կիորհի վոչ շատ՝
Արծաթէ թռւմանի մսովն,

Բայց իշխող մի շահի համար,
Թռւմանը վոսկի յե զուտ.
Կասի նա արծաթէ թռւման,
Յեվ վոսկի կընծայի, անշուշտ

Այդպես են միշտ դատել մարդիկ,
Այդպես և Ֆիրդուսին ինքը,
Նա, վոր հորինեց հայտնի—
«Ճահնամն» սրբազն գիրքը—

Գրեց նա յերդն հերոսական,
Շահի հրամանով ուղիղ,
Խոստացավ յերկրակալ արքան—
Մի վոսկի—ամեն մի տողին

Յեվ անցավ տասնըյոթ գարուն,
Վառվեց վարդն ու նորից հանգավ,
Բլուլը—վարդերին սիրուն
Գովերդեց տասնըյոթ անգամ:

Յեկ սուետն այդքան տարիներ
Իր մոքի վոստայնի վրա
Գիշեր ու ցերեկ հորինեց
Հոյակապ յերգի զորգն իրաւ

Հորինեց գորգի մեջ իր այդ
Վարպետի հմտությամբ խորին—
Հայրենի դյուցազունքն անհաղթ,—
Ֆարսի հին թագավորներին

Իրենց վողջ դժութական, վսեմ
Փառքերով ու արկածներով.
Հմայիչ հեքիաթներ լուսե,
Դեերով ու կախարդներով:

Յեկ վողջը՝ կենդանի, ծաղկուն,
Յեկ վողջը՝ փայլփրսուն ու վառ.
Թաթախած յերկնալին շողքում,—
Իրանի լույսերում պայծառ:

Մինչ անհուն—աճսկիզբն հավերժ
Նրա ընդգրկող սրտում
Վատովնւմ եր, փայլփրլնւմ անվերջ,
Հակառակ դուրանի, մուֆթնւ:

Յեկ այդպես՝ յերգելով հաջող
Մինչև վերջ, նա հենց նույն ժամին,
Գիրքն յերկու հարյուր հազար տող՝
Անհապաղ ուղարկեց շահին

Իսկ շահից՝ ծառաներ յեկան,
Շբշեցին Հազնի քաղաքում,
Փնտոեցին և վերջը զտան
Ֆիրզուսուն մի բաղանիքում:

Մեջքերին մի մի պարկ առած,
Ծնկաչոք, զրեցին ներքեւ,—
Ֆիրզուսու վոտքերի առաջ,
Վորպես պատվավոր պարզեւ

Բաց արավ նա խկույն և եթ
Պարկերը մետաղի բերած.
Բայց խարված՝ քիչ զնաց յետ-յետ,
Խոր զարմանք յերեսի վրա...

Պարկերը բերանե-բերան
Լիքն ելին, բայց միայն... արծաթ...
Սոոկ արծաթ փող ելին նրանք...
Պոետը դասնորեն խնդացի—

Յերկուսը նրանց նվիրեց,
Իրեւ վարձ խեղճ մշակների.
Յերբորդը՝ նրան, վոր իրեն
Լողացրեց համարյա ձրիւ

Յեկ ապա զավազանն առավ,
Հեռացալ նա նույն այդ ժամին,
Թաղաքի գարպասի առաջ
Թափի տալով վոտքերի փոշին:

II

«Խարեց ինձ՝ հասարակ, նոեմ
Մարդկային իր ստորությամբ.
Յես չեյի լցվի չարությամբ,
Յեթե նա պարզապես ասեր:

Հուզվում եմ յես նըա՝ համար,
Վոր խոսքը խափա՞ր եր, անդեմ,
Խորամանկ լուսթյամբ խարել՝
Ել բնչ կա սրանից անարգ:

Հողով վեհ, մեծություն անդամ,
Նրան նվ կհամեմատվեր,
Մատաչափ բարձրություն ուներ,
Այդ մարդուն, — զահն արքայական.

Ճշմարիտ, արդա՛ր մարդ ու մեծ.
Արև եր խոսքը մեղ համար,
Բայց այլեց կրակովն իր վառ,
Յել անմեղ իմ սիրու խարեց»:

III

Մուհամեդ շահը ճաշել ճաշակով
Հանգստանում ե ամրացած հոգով,
Զոյ այլու ցայտող ջրերի կողքին
Բազմել ե շահը ծաղկավառ գորգին
Ահա ծառաներն, ու շարքում նրանց՝
Անսարին, — շահի սիրելի ծառան
Հուր արեի տակ, մարմար վազերում
Վարդերի րջլսող աղբյուրն ե բուրում»

Հովհարների տակ՝ հարճերի, կանանց
Դեմքը ծածկում ե արժավը կանաչ
Կիսարիաները զլիները պատաճ
Ցերկինքն են տեսչում, յերկիրը թողած
Հանկարծ քնարի մի ձայն հրաշապին
Ցերգի հետ գաշըն՝ ցնցում ե այգին
Լուռ նիրհոդ շահը թռչում ե տեղից,
— «Այդ մեծ հորինած յերգն ե զբավիչ»:
Շահը սկատասիան — խոսք ե սկասում
Անսարին ասաց. — «Պոետ Ֆիրզուսին»:

— «Ֆիրզուսիւ յերգը...», Շահը հարցուց, —
«Վորաբեր ե հիմա այդ յերգիչը մեծ»:

Անսարին ասավ. — «Թե՛ պոետը խեղճ
Ապրում ե վաղուց աղքատության մեջ»:

Այստեղ ե հիմա նա, թուս քաղաքում,
Իր փոքրիկ այգու հողն ե մշակում»:

Մուհամեդ շահը լուց բավական,
Ապա Անսարուն տվեց հրաման. —

— «Լոյր» — Հապշտապ գնա՞՛, ախոռից —
Դուքս բեր հարյուր հատ լավագույն ջորին

Ուզտեր դուքս քաշիր, և բարձիր նըանց
Մարդ յերջանկացնող բարիքներ ու զանձ,

Պես-պես զանձերից բարձիր ուզտերին, —
Հակեր մեծամեծ թանգ հագուստներին

Հազվագյուտ զարդեր, վոսկիներ անչափ,
Անթիվ, անհամար փղոսկր ու մարջան»

Թասեր, բաժակներ բոլոր տեսակին
Վառ մորթիներից ազնիվ փալանգին

Վոսկի զիստակներ, զարդարուն գորգեր,
Վորքան գործել են ջուլհակները մեր»

Չմոռանա՛ս և ձիանց սաղք ու կարգ.
Թանկաղին թամբեր, հրազեններ թանգ»

Չմոռանա՛ս և անուշեղեններ,
Ամեն տեսակի ազնիվ խմիչըններ»

Տեսակներ փափուկ, քաղցր թխվածքի,
Ամեն ճաշակի, ամեն տեսակի»

Նույն իմ ախոռից վեր առ առանձին—
Տասներկու ընտիր արարական ձի,

Բնարիք անհամար ստրուկներ սեգույն,
Մարմուկ յերկաթե, դործում զիմացկուն.

Տա՛ր այս ամենը, վեր թափիր թուսում,
Ինձնից պարգև պատ ֆիրդուսուն».

Անսարին իսկույն գնաց ախոռից
Դուրս քաշեց, բերալ ուղտեր ու ջորիք:

Բարձեց գանձերը հաղվազյուտ ու թանդ,
(Դա՞ հարկ եր տվել մի ամրող նահանդ)

Արեր յերեք շրջան գեռ չարած
Կարավանն շտապ գնում եր առաջ,

Կտրում եր սարեր, անապատներ գորշ,
Առջից բռնած ծիրանի դրոշ:

Մի շարաթ հետո, իրիկնապահին
Հասավ կարավանը թուս քաղաքին:

Թմբուկ զարկելով, յերգով, աղմուկով
Հասավ քաղաքի մեծ դարբասի քով:

— «Լա՞ լիլ-իլլ-Ալլահ»։ Հնչեց տիրապին։
Կարավանն անցավ ներս, — արևմուտքից։

Իսկ արելքից՝ ֆիրդուսուն մոլլան
Տիուր տանում եր դեպի գերեզման։

1932

ՄԱՆՐ ՍՈՒԼԵԱՆ ՄԱՅՄՈՒՏԻ ՄԱՍԻՆ

Ֆիրդուսի

Ո՞վ աշխարհակալ, դու սուլթան Մահմուտ,
Մարդուց չես քաշվում քաշվիր աստրծուց, —
Քեղանից ել մեծ շահեր են յեղել,
Վորոնք վոր թագեր, գահեր են թողել,
Քեղանից ել շատ ունեցել են գանձ, —
Հող ու բանակներ, անուն վեհապանձ,
Ցեղել են նրանք ուղղամիտ, արզար,
Ցեղ վհչ թե քեզ պես յերկմիտ ու խարդախուր
Խեղճ հազարակին ոգնել են սիրով,
Ընթացել մաքուր, սուրբ ճանապարհով,
Զգտել, վոր իրենց համբավը անճառ՝
Դրանցն զանի գեղեցիկ վախճան։

Յերբ շահը վոսկու յետելից վագի,
Նրան լոկ ստոր անուն կսաղի
Դնւ, այժմք գահիդ նստած վեհ ու գոհ՝
Կասես ինձ. — «Ի՞նչ ե հոխորտանքը քո?»
Սուլթան, չես զգում իմ հայացքը հուր,
Չես վախենում իմ խոսքերիցը սուրբ:
Դու, ինձ խորամանկ ու չմը ես կարծում, —
Զգոր առյուծիմ՝ վոչխամը ես կարծում.
Թե կասես՝ Ալուն, Ներիին յերգող —
Բարձրացավ գեմբդ. — բանաստեղծը կոշտ:
Սակայն, ով Ալուն տա թշնամություն՝
Նա փնտ կդառնա յերկու աշխարհում:
Չեմ հրաժարվի նրանց ծառայել,

Յեթե վոր դառնամ կտոր-կտոր ել,
Սյդ յերկու մեծից չեմ հրաժարվի,
Թե՛ վիզը կտրի սուբը սուլթանի
Միայն քչերն են նրանց խորն ատում,
Քչերին—աստվածն ել հնարն և նետում

Ո՞վ եմ,—ներիի-յես խոնարհ ձառան,
Ես իմ ընթացքը՝ նրանից առա:
Փիզ, ուզում ես ինձ վոտքի տակ չարգել.
Նեղոսի նըման արյունըս թափել...
Վհչ, դեռ պահում ե իմ սիրութ հլու՝
Ներիի սերն ու յեռանդը Ալու:
Յեկ մարգարեն այն, վորն աստղըուց մեծ,
Պատգամ, հրաման ու արգելք բերեց՝
Ասել ե՝ «Մարզիկ, չապատմքեք, յես—
Շենքն եմ զիտության, Ալին՝ զուռը վես»:
Դեռ այս խոսքերը մարգարեյի մեծ,
Իմ ականջներում հնչում են անվերջ:
Դնւ, սուլթան, յեթե խելք ունենայիր՝
Մեծ Ալու կողքին տեղ կունենայիր:
Մինչ մահ—յես իմ ուղին չեմ լրի,
Հողն եմ ինձ հաշվում հեյդարի վոտքի.

Յես չեյլ զիակել մոչ վոքի կյանքում,
Բայց մի պարզ միտք կա նստած իմ հոգում,
Այն, վոր իմ գոնից, քայլերով անահ
Սուլթան Մահմուտը թէ վոր անցկենա
Թեկուղ իր շուրջը վոսկի վարարի,
Զի տա նա խեղճին մի հատիկ զարի
Այնինչ մեծ Ալին, պայծառ ու արթուն,
Ուզզամտության ջահը իր սրտում՝
Աստծու հրամանով՝ վոսկի թագ կտար—
Գովերդ կղբեմ յես նրա՝ համար,
Վոր սուլթան Մահմուտը մի որ զգա,

Թե քանի աշխարհն ու սուլթաններ կան՝
Մեռած շահերին խոսքըս կհամնի,
Կդիակենան, վոր Ֆիրզուսին ազնիվ՝
Մի տող՝ չի գերի Մահմուտի մասին.

Յերգել եմ Ալուն, ներիին, յես իմ
Տողերով շրեզ, մարգարտանըման—
Հողը չի ծնել ֆիրզուսու նման:
Ավսոս, վոր բախար դարձավ չարաթույն,
Ավսոս, վոր սուլթան, չնոյեցիր դու
Դոնե մի բասե, իմ գրած գործին
Քեղ ինչ լեզուներ ձամրից հանեցին,

Իմ գրած գործին, ով ծուռ նոյնող մարդ,
Բաց Ցողեցիր դու ե՛ համրավ, ե՛ բախտ:

Հզոր շահերին, յես իմ քանքարով
Յերգեցի զաշըն, շրեզ խոսքերով,
Յերը ութսուն տարիս մոտեցավ դարձուր,
Ցնդեց իմ ծույսը ու կորավ իզուր...
Իզուր, յերեսուն տարի յես արթուն—
Տքնցի բախար տենչը իմ սրտում
Վաթսուն հապաղ քելթ... ինչ ողուտ, սակայն,
Վորոնց մեջ ահեղ կովի ձայներ կան—

Յերգեցի նետի ու թրի մասին,
Աղեղի, տեղի ու որի մասին.
Զրահի, ամպի, մուժի ու փոշու:
Վահանի, վորը վայլում եր մուժում:
Յերգեցի յերզը ահեղ նիզակի,
Դաշոյնի, վայլի ու հանդերձանքի...
Ծովի, ցամաքի մասին յերգեցի,—
Խոլ գաղանների, վազրի, առյուծի,
Փղի ու զիի ու իժղահարի,

Կոկորդիլոսի, նենգության, չարի,
 Սև զրաբարտության, ջաղույի, խենթի,
 Յել ստրուկների անհամար, անթիվ,—
 Վորոնցայներից աշխարհն եր թնդում—
 Հմբիշների յես յերգեցի խնդուն,
 Ու ձեռուների՝ կովի մեջ հուարտ.
 Քաջերի անդուսպ հոքանքը անպարտ—
 Թուրի ու Ակմի ու Աֆրասիարի,
 Ու Ֆրիդունի, ու Քեյ-Քորազի,
 Բանապետությունն ամբողջ Զոհակի,
 Ու Նարիմանի, ու Գեշտասիրի.
 Յերգեցի Սամի մարտերը պես-պես.
 Դերենդ Թեհմուրին գովերգեցի յես.
 Ու Մանուչեհրին, Հուշենդին այլի,
 Արի Ջեմշեղին, զոր ու պարթի:
 Յերգեցի փառքը Խուսրեվի արի,
 Քավուսի, ապա թագաղիների,
 Արույրը Ռոստամ Զալի ամրասիրտ,
 Ութուն ըմբիշի, Գուգերսի մասին—
 Յերգեցի ամեն մի ձիավորի,
 Լեհասմբ շահի մասին քաջարի,
 Բանակների տեր շահ Գեշտասիրի,
 Գործերն աստղարաշի մեծ Գամասիրին
 Յերգեցի լուսնից փայլվըլուն մարդուն.
 Վոր չար ու բարի զործեր ե նյութում
 Դարաբին, ապա նաև Դարանին,
 Բեհմինին, ինչպես մեծն Իսֆենդյարին,
 Շարուրին, հետո և Արտաշերին,
 Ու Բահրամին, ու Անուշերվանին,
 Հուրմուզին, ապա Փիրուզին նաև,
 Գուդարին, մեծըն Խուսրեվին պարթի...
 Այս հոչակավոր քաջերին հոկա,
 Վարոնց յերգեցի, ով Մահմուտ արքա',

Վաղուց, հողի տակ քնել են անձայն.
 Բայց այսոր նրանք, նոր կյանք ստացան.—
 Քրիստոսի պես՝ ովեցի նրանց—
 Վոզի ու մարմին, ու անուն անանց:

Նվաստիս յերգը կապըի, ով սուլթա՞ն, —
 Աշխարհում, վորակես անջինջ հիշատակի—
 Կավերին շենքեր, —մոխիր կլինեն,
 Արեն ու անձրի գույնը կտանեն,
 Սակայն իմ յերգի շենքը բարձրարերձ՝
 Չի կորչի անդամ մի նշանախեցի—
 Կանցնեն գարերը իրար յետեից,—
 Կդնահատեն ժողովուրդներն ինձ:

Սուլթա՞ն, իմ հույսը փշեցիը իգներ:
 Շահերի շահից՝ չեյի սպասում:
 Թող ստոր մարզիկ միշտ մնան անրախտ,
 Վորոնք լավ խոսքը համարեցին վաստ
 Ո՞վ ինձ պարսապեց սուլթանիդ առաջ,
 Ո՞վ ամպով ծածկեց լույս աստղը վառած:
 Գուցե՛ այս բանում մեղավորն յես. Եմ.
 Լիներ մի լավ մարդ, պատճառն ինձ ասեր.—

Բայց գիտեմ շատ լավ, ու ասում եմ ինձ,
 Վոր չարիքն ասած՝ գալիս ե լեզվից.—
 Խոսքերիս սերմը ցանեցի ամբողջ.
 Աշխարհը գարձավ մի զբախտ բողոք,
 Իսկ մարզիկն անհոգ՝ ասին, թե անափ
 Աշխարհն յերկընքի վառ աստղերի չափ
 Բանաստեծներ ե իրենց նվիրել...
 Այդ ճիշտ ե, հարկավ, սակայն, վոչ վոք դեռ
 Ֆիրզուսուն նման յերգեր չեն գրել:—
 Նա, վոր «Շահնամե»-ն տքնեց, հորինեց,
 Պարսիկի հոգում հոր խոսքեր ցանեց:

Յեթե սուլթանի խոսքը պինդ լիներ՝
Դժվար ֆիրզուսին չոր գետնին քներ։

Յեթե ե ժամացել հարուստը անսիրու, —
Մտածել թշվառ աղքատի մասին։

Յեթե սուլթանը ունենար քիչ զույթ՝
Զեր ստորացնի ինձ այսպես, անշուշտ
Բայց նրա հայրը ու սպապը մի որ
Չեն յեղել վճչ վեհ, վճչ ել թագավոր։

Թե նրա հայրը լիներ Շահնշահ՝
Կէրշեր սուլթանն իր հորը մի պահ՝
Գլխիս կրնել նա թագ վսովեյեռ...
Սուլթանի մայրը թե խաթուն լիներ՝
Ծունկը կհամեր արծաթն ու վոսկին...
Բայց Մահմուտը ուր, ուր աղնիվ հողին,
Նա ցածր ե, խարդա՛խ և ստորածին։

Հուռ աշխատեցի յերեսուն տարի
Յեկ սպասեցի գանձի, նվերի.
Թե անա կտա սուլթանը մի որ,
Կղզամ յես ինձ քա՞ջ, ու սեզ, ու հզնը,
Նվեր չստացա... Յեղա անաքանդ—
Նվերը յեղավ մի հյուլեյաչափ
Այնքան ել մեծ եր զանձը մեծ շահի,
Հազիվ ծախսեցի կես ճանապարհին։

Ե՛, ինչ սպասել նման սուլթանից,
Նման նենգալոր, սի գավաճանից,
Մարդ ինչ սպասի ստրուկի վորգուց,
Մի մարդ, վոր ոճ ե պահում իր սրտում։

Դասնարմատ ծառը դրախտում տնկիր,
Քո գուրզուրալից ձեռով խնամիր.
Խնամիր նրան գու հազար ձեռով.
Զրիր անապակ, շաքարի ջրով՝
Հավատա՛, նրան զարման չի լինի.
Մեկ ե՛ պառուղը զա՛ռըն..կլինի.

Ով վոր անցկենա խելոքի կողքով՝
Հողին կլցլի անուշ բուրմունքով.

Ով ածխագործին կպած անցկենա՝
Սնկասկած, մրոտ կվերադառնաւ
Վասության մեջ կա լավություն արդյոք.
Գիշերից՝ մութք չի խլի վոչ վոք:
Զուքը չի տանի սկ մորթի գույնը.
Ինչքան լվանաս՝ նա նորից նույնն ե,

Բան մի սպասի անազնիվ մարդուց.
Նրա աչքին զուք հող մի փչի գոււ.—
Նրան այդպես ե աստվածն ստեղծել. —
Ձեռքից ինչ կդա... Աստվծու զործ ե...
Մեծություն չկա ե այն ել խոսքով:
Յերկու հարյուր խոսք, նոր ապա՝ կես զործ։

Սուլթան Մահմուտը թե աղնիվ լիներ՝
Գլտության ուղին ճիշտ կհամարեր
Մեծիրտ Ռոստամից, շահերից մեռած՝
Յես շատ խոսեցի ձեզ մի քիչ առաջ.
Սուլթանը լիներ թե մեծ սրտանի,
Իմ վերջին որը—տխուր չեր անիւ
Յեկ յես գրեցի այս ծաղըը, վոր նա՝

Նայի իր շուրջը, աչքերը բանա,
Վոր պարզ հասկանա, մաքից չչնջե—
Թե վարն ե պատվերն ու խրասն ինչ եւ
Սովորի հարգել նա գեթ այս որից.—
Դառնություն չտալ բանաստեղծներին—
Դառնացած մարդու սրտում ծաղըր կա,
Իսկ ծաղըր՝ կապրի, քանի կյա՞նքը կա

Ասութու առաջ լացնվ, բողոքով
Գլխիս կթափեմ հողը իմ ձեռքով.
Կասեմ՝ «Մահմաւախն գեհենում վասի,
Յեկ խեղճիս հոգին ա՛ս, լուսավորի՛»:

1934

Ո Պ Ս Տ Ա Մ Ի Ր Ա Խ Ե Զ Ի Ն

Ֆիրզուսի

◀ Պոր Զալը որհնեց վորդուն և հրաման տվեց նոր,
Վոր Զարուից ու Քաբուլից բերեն ձիերը բոլոր
Ցեվ բերեցին յերամակը արագավազ ձիերի՝
Ամեն մեկի վրա գաղած՝ անուները շահերին
Քաջ Ռոստամը մեկմեկ րոնց, բախտը փորձեց սահմանած,
Զեռքը գրեց նրանց մեջքին, փորձեց, վոր ուժն իմանա
Բայց հսկայի ձեռքն ուներ մի այնպիսի ուժ ահազին,
Վոր ձիերի մեջքերն ամուռ՝ կորվում եյին կրկնակի.
Ու կորվելով՝ համուռ մինչեւ հողը, հողին փոս տալով,
Ու վեր կենում զետնից, ապա փախուստ տալիս փնչալով:
Այսպես մեկմեկ ընկնում եյին քաջ Ռոստամի ուժի տակ
Արագավազ նժույգների յերամակը բազմերանգ:

Բայց և ահա մի գորշ մատակ հպարտ անցավ առանձին.
Վոտքերը կարճ և լանջը լայն, նման լանջին առյուծին
Ականջները վորպես յերկու պողպատ դաշույն սրածար,
Կուրծքը հարուստ, և վիզը՝ կեռ և կազմը նուրբ ու նիհար
Իր յետեցից, իր բարձրությամբ, նա մի քուռակ եր բերում.
Վոր կարծես թե չեր քայլում, այլ խազ եր անում ամպերում.
Լայնայանջ մի աշխետ եր զա, աչքերը սև հուզ ասես,
Ականջները պինդ պողպատյա, պոչը՝ ցուլի պոչի պես.
Մի նկար կար նրա գալար մարմնի վրա աննկուն,
Վոր կարծես թե կարմիր վարդ եր, և հոտավետ, և՝ գանգուր,
Զըռվ թռչեր, թե ցածաքով, ցուրտ լիներ կամ տոթ ու տապ՝
Նա կկտրեց ճանապարհն իր՝ վիշապի պես հապշտապ
Յերկու փարսախ հեռվից նրա թափանցող աչքը մինում՝

Անգամ մի սկ շորի վրա՞ մըջունի քալչն եր տեսնում.
 Հոսանությունն իր սնուր եր խիստ, թեթև բան միտքը մարդու
 Նա զնում եր համբան—ուղիղ, ճշմարտորեն և արթուն,
 Եել չեր զիջի «փեշանց» կոչված այն քեն պահող նժույզին,
 Մանալով վիշապի պես թուիչներով ահագին,
 Ականջները սուր սլաքներ, ճախրը մքրիկ ու թաթառ,
 Կովի ճամբան խաղ ու պար եր, ջնուր եր կարծես իր համար,
 Մարակն յեթե քարին կպչեր՝ հրահանի պես, հանկարծ,
 Մի փարսախից այն կողմ արդեն կթուելին հուր ու կայծ,
 Չզուպեյին յերասանով՝ մարդու տակից դուրս կզար,
 Ակնթարթում սուր կթուեր յերկի մի ծայրն հեռակա,
 Անհաղթ փղի նուժ ուներ նա, ուներ ուղտի բարձրություն,
 Ահեղ, վորպես առյուծն հզոր, ամուր, վորպես Բիսություն.

Յերբ Ռոստամը տեսավ մատակ ձիուն չքնաղ ու գերող,
 Փոկը սարքեց, վոր շուտ րոնի նրան ճարպիկ ձեռքերով.
 Չիապանը սակայն ճայնեց, — «Ուրիշի ձին մի բանի»,
 «Ո՞ւմն ե այդ ձին, — Ռոստամն ասաց, — վոր վնչ մի նշան չունի»:
 «Նշան չունի, հենց այդ ե, վոր, — Ճիապանը ասաց ծեր, —
 Խոսակցության; զրուցների միշտ առարկա յեւ դարձել.
 Իշխան ենք ասում այդ քուռակինտ Իշխան ենք ասում մենք զրան,
 Վոր ջրի պես սրբնթաց ե և գույն ունի հուրճան.
 Զենք իմանում, ով ե տերը, հենքել ել չենք յերազում,
 Այն զիտեմ, վոր այդ քուռակին «Ռոստամի Իշխան» են ասում,
 Յերեք տարին, լրացել ե, թամբելու որը հասել,
 Մեծամեծներն այդ քուռակին շատ են ուղել, յերագիլ,
 Դրա մայրը, յերբ տեսնում ե պարան բռնած մի մարդու՝
 Կազում, հետք կովում ե միշտ, քաջ առյուծի պես արթուն.
 Զենք իմանում մենք այդ բանը — ով զու հզոր փահլեան,
 Գաղանիքներ են, և մեր կյանքում գաղտնիքներ ել կիման:
 Արդ՝ զգնայշ կաց և աչալուրջ նայիր զու այդ քուռակին,
 Մի պորտփեր նրա շուրջը, — վիշապի այդ ահագին,
 Թե վոր տեսնի նրա մայրը՝ զեմզել կովի զուրս կզա,
 Էնձի կաշին կպատասի և առյուծի սիրտն անզամ:

Յերբ Ռոստամը լսեց նրա այդ կոսքերը միամիտ՝
 Զզաց ծերի ծուռ մտքերը և ծիծաղեց խորամիտ,
 Հանեց իրա փոկպարանը, շտապ ձգեց նա առաջ,
 Բաշխի սիրուն զլուխն իսկույն պինդ ողակի մեջ առավ, —
 Վրա հասավ Իշխանի մայրը առյուծի պես զայրազին
 Յել ուզեց, վոր ատամերով Խոստամի վիզը պոկի
 Բայց Ռոստամը սաստեց նրան բարք հայացրով շողշողուն,
 Այսպես, վոր խենթ մայրը Իշխան՝ շվար գամկեց իր տեղուաւ, —
 Յեվ զգաց մի ծանրը բռունցք, վոր ահագին ժայռի պես
 Շամըր իջազ զլսին իրա, հարվածներով սրտակեգ:
 Էնկած տեղից հազիլ յելավ զողղողալով, շվարած,
 Շուռ յեկավ ու փախավ իսկույն, հողմի նման թէ առած.
 Հումկու Ռոստամն վոտքը պրկեց, սեզմեց պարանը զդի
 Յել նեղացրեց նրան այնքան, վոր հզոր Իշխան հաղիվ
 Բերեց իր մոտ, յերկու ձեռքով քաշ տալով ձիգ վզկապից,
 Ասպա սեզմեց Իշխան՝ միջքը՝ ձեռքով նա իր պնդապինդ. —
 Զկրոպացավ սակայն Իշխանը նրա ճնշող ուժի տակ,
 Անգամ կարծես վոչինչ զգաց ճնշումից այդ ծանր ու տաք...

Ռոստամն ասաց իրեն մտքում. — «Այս ձին ե ինձ արժանի.
 Կարող ե նա ինձ հետ լինել ամեն կավում ու բանի»,
 Շտապ ցատկեց ճկուն մեջքին, թուավ հողմի պես արագ.
 Ու տաքացավ, վառվեց Իշխանը, ինչպես շարժուն հուր կըալ,
 Քշեց ապա արագընթաց վարդապույն Իշխանը հուրհուր,
 Վառելով իր սրտի խորքուն նոր կովի տենչը զարհուր,
 Սանձած ձիուն թողեց նա, վոր թուչի աղատ ու արձակ,
 Տեսավ հզոր յերակ ունի, և ուժեղ սիրտ՝ համարձակ.
 Կտանի իր փղի փղը և իր լանջը ահագին,
 Սազավար ու գուրզ կըրի և զեն-զրահ ծանրազին...
 Յեվ զմնելով նա հրեղեն նման մի ձի հաղվազուտ՝
 Ուրախության փոխվեց իսկույն տիրությունը նրա մութ:

Այնժամ հզոր Զալը տեսավ հրեղեն Իշխանը թամրած,
 Յեվ իր որհնած քաջ Ռոստամին, ու պարզեց գեմքը ամպած. —

Գանձարանի փակ գոները նա հապշտակ բաց արագ,
 Իրա հզոր հեծյալ վորդուն՝ զրամ տվեց լիտաստ
 Մեծ կուսով զարկեց փղի մեջքից կախված մեծ զանգին,
 Բարձրացավ մի զի զրնգուն, մի արձագանք ահագին.
 Գնաց անցավ Զարուից այդ ձախնը հզոր ու անկանդ,—
 Քնած յերկրին նոր շնչնչ տվեց, մեռածներին տվեց կյանք.
 Աւ վեր կացավ Զարուից մեծ զորքը նման մի ծովի,
 Նման հզոր, արյունուշա առյուծների արշավի.
 Յեկ առաջից զնում եր նա՛,—քաջ Ռոստամը ձիուն չեց.
 Իր յետից բազմահուստ ծերունիներ մեծամեծ:
 Լցրեց սարն ու դաշտ ու ձորը կովողներով իր բազում,
 Վարոնց մոտից հավք չեր թռչի նույնիսկ—անզամ յերազում:
 Յեկ դոփելով դաշտերն անծայր զինվորներով քաջարի:
 Յելակ ընդգեմ բռնությանը, —ընդգեմ վատի ու չարի:

Յեկ յերբ բացվեց վողջ իրանում պերճ դարունը վարդաշամ՝
 Զորքը շարից զեսի թուրան, բանակ զարկեց ահասաստ
 Լուր զնաց շահ Աֆրասյարին, քունը փախավ աչքերից,
 Դադար տվեց խնձույքներին, հրամայեց զորքերին,
 Յեկավ մինչեւ Ռեյ բազաքը, ծով կարեց Խար գալառում,
 Վորտեղ Զալի և Ռոստամի մեծ բանակն եր համառում:
 Յերկու փարսախ հեռու կանգնած բանակները այդ յերկու
 Սյան ծարակ նայում ելին իրար խիստ ու ահարկու:

1934

130

ՍՈՂՐԱԲԻ ՍԱՄԱՆԴ ՁԻՆ

Յիրգուսի

Ապա Սոհրարն այսպես խոսեց իրեն մոր հետ քաղցրանուն.—
 «Իմ գործերը հետզհետե միշտ գեպի լավն են զնում.
 Ուզում եմ յես իրա՞ն զնալ, զոն կյանքում մի անզամ
 Կտեսնեմ իմ գոված հորը, —քաջ Ռոստամին ամրակամ:
 Արդ, ինձ մի լավ նժույզ ե պետք, մի նժույզ ձի սրբնթաց,
 Վոր պողպատե իր սմբակով շուրջը փոխ բոց ու կայձ,
 Վոր փղի չափ ուժ ունենա, արծըվի պես սրաթե,
 Լոզա ինչպես ձուկը ջրում, ու յեղնիկի պես՝ թեթև:
 Մի հուժկու ձի, վոր ծանըը իմ զուրզն ու կոպալը տանի,
 Տանի լանջ ու պարանոցը և հասակըս տիտանի.
 Միտք չունի, վոր կովի մտնեմ թշնամու հետ յես վոտքով.
 Այլ զինավառ և հրեկեն վիշապ ձուու թոխընվ»:

Յերբ վոր մայրը լսեց վորդու ցանկությունը, վեր կացավ
 Լուսարացին, մարդ ուզարկեց, արուներից ընդարձակ
 Կակուց. բերեց ձիասանին, պատվեր տվեց հապշտապ—
 Խսկույն բերի՝ յերամակը՝ նժույզների հոգմաթափ,
 Վոր Սոհրարը իրեն համար ընարի մի լավ նժույզ ձի,
 Վոր կովի դաշտ թռչի, ինչպես կորյունը քաջ առյուծի:

Յեկ ձիերի յերամակը վորը անհոգ արածում,
 Արուներում իրեն զվարթ խինդ, խրխինչն տարածում
 Բերեցին մի ակընթարթում—և Սոհրարը մոտ զնաց,
 Վոր ընարի իր զինակիցը, նժույզը իր հավման:

Ապա կաշվե պինդ պարանը ձգեց առաջ պնդապինդ,
 Քաշեց մեկ-մեկ իրեն առաջ փորձեց նըանց սրտախինդ:

131

Զեռքի ուժով սեղմեց մեկմեկ գեր մեջբերը, տեսավ վոր—
Չիրըն ամբողջ ձկվում ելին աղեղների նման կոր.
Չարդոտելով շատ շատերի վողնաշարներն ուժապալ
Եեվ վնչ մեկին արժանընտիր իրեն համար չզտավ.

Մի կողմ քաշվեց սեկ Սոհրաբը տխուր, շվար ու անձայն-
Ցերը վերջապես նրան ահա մի քաջ զինվոր մստեցավ.
